

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)			[2] Մերիա		[3] Համար	
2	Ապրիլ	2019 թ.				Բ		1180970807	
[4] Մատուցման ամսաթիվը									
2	Ապրիլ	2019 թ.							
			Ճշգրտվող հաշիվ վավերագրի						
			Մերիա			Համար			
			Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ						
Պայմանագիր			[5] Կեքման ամսաթիվ			[6] Համար			
			2 Ապրիլ, 2019 թ.			Բ1180970807			
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)									
ԳՐԱՎՈՐ ԵՎ ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ									
[7.1] ՀԴՄ կտրոնի համար									

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի												
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)					0	0	1	2	4	1	0	5
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը												
[10] Անվանումը			«ՖԻՆԼՈՈՒ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)									
[11] Բանկային տվյալները			ԱՐԴԵԻՆԲԱՆԿ ՓԲԸ					N 2474602078940000				
[12] Գտնվելու վայրը (հասցեն)			ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՍԱՍ									
[13] Լրացուցիչ տվյալներ												

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի												
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)					0	2	6	3	1	2	6	3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը												
[16] Անվանումը			«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ									
[17] Բանկային տվյալները			ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն					N 900011000834				
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)			ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՍԱՍ ՄԱՍԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5									
[19] Լրացուցիչ տվյալներ												
[20] Ում միջոցով			Անուն, ազգանուն			Համար			Ամսաթիվ			
			Լիազորագիր									

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը						
NN Շ/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Շտապումը ծավալը կամ քանակը	Միավորի գինը	Գնը(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-պարսկերեն-հայերեն թր. գործ թիվ 14115816	րոպե	2290	116.67		267174.3
2	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն թր. գործ թիվ 09108716	րոպե	230	83.33		19165.9
3	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն թր. գործ թիվ 23103815	րոպե	560	83.33		46664.8
4	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն թր. գործ թիվ 13102816	րոպե	255	83.33		21249.15
5	իրավաբանական գրավոր թարգմանություն լեհերենից հայերեն թր. գործ թիվ 69108015	նիշ	83073	3.33		276633.09
6	իրավաբանական գրավոր թարգմանություն լեհերենից հայերեն թր. գործ թիվ 69108015	նիշ	89045	3.33		296519.85
7	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն թր. գործ թիվ 60106416	ժամ	6	5000		30000
8	իրավաբանական գրավոր թարգմանություն հայերենից ռուսերեն թր. գործ թիվ 60106416	նիշ	86572	1.39		120335.08
9	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն թր. գործ թիվ 90359416	ժամ	44	5000		220000

10	իրավաբանական գրավոր թարգմանություն վրացերենից հայերեն թր. գործ թիվ 58203216	նի2	3756	1.67		6272.52
Շնչամենք						1304014.69

Ծառայություն
մատուցող
(աշխատանք
կատարող)

SHAHINYAN VARDUHI 7803710425

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

02/04/2019 14:15:39



Ծառայություն
(աշխատանք)
ստացող

[Handwritten Signature]

(ստորագրությունը, անունը, ազգանունը)



Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Թարգմանիչ ներգրավելու մասին

05 մայիսի 2016թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ, արդարադատության լեյտենանտ Լ. Յուլյանս, վերանայելով վարույթումս գտնվող թիվ 14115816 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Սոհսեն Բախշյանը, 2016 թվականի մարտի 02-ին՝ ժամը 21:00-ի սահմաններում, Երևան քաղաքի Արաբկիր 53 փողոցի 2-րդ տան դիմաց, հասարակական կարգի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելով, չնչին առիթով վիճաբանել է ԻԻՀ քաղաքացի Էրֆան Ռեզայի Աթուֆիի հետ, որի ընթացքում մեկ անգամ բռունցով հարվածել է վերջինիս դեմքին և 2 անգամ ապտակել՝ պատճառելով առողջությանը միջին ծանրության վնաս, առողջության տևական քայքայումով:

Փաստի առթիվ 2016 թվականի մարտի 21-ին ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով հարուցվել է թիվ 14115816 քրեական գործը և կատարվում է նախաքննություն:

Սոհսեն Ալիբեգայի Բախշյանը ազգությամբ պարսիկ է, գրում և կարդում է պարսկերեն լեզվով, իսկ հայերեն լեզվին չի տիրապետում:

Նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15 հոդվածի համաձայն քրեական դատավարությունը տարվում է հայերեն լեզվով, իսկ Հերոս Դիդարիանտն ազատ տիրապետում է հայերեն և պարսկերեն լեզվին, ուստի ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 15 և 83 հոդ. հոդ. պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Սույն քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Ֆինլու» ՍՊ ընկերության պարսկերենի թարգմանիչ Հերոս Դիդարիանտին/ծնվ. 22.06.1962թ, բարձրագույն կրթությամբ, հայ, ՀՀ քաղաքացի, բն. ք.Երևան Գ. Սահարի փող. 8 տանը/:

2. Թարգմանիչ Հերոս Դիդարիանտին ծանոթացնել և պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին, ինչպես նաև առանց քննիչի թույլտվության նախաքննության տվյալները հրապարակելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 342-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ավագ քննիչ՝



Լ. Յուլյան

Որոշման հետ ծանոթացա



Հ. Դիդարիանտ

ՏԵՂԵԿԱՆՔ

20.07.2016թ.

ք. Երևան

Ես՝ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Լ. Յուլյանս կազմեցի սույն տեղեկանքը այն մասին, որ վարույթումս քննվող թիվ 14115816 քրեական գործով 05.05.2016թ. որոշմամբ որպես թարգմանիչ ներգրավեցի «ՖԻՆԼՈՈՒ» ՍՊԸ-ի աշխատակից Հերոս Դիդարյանտին, որը կատարել է բանավոր թարգմանություն պարսկերեն-հայերեն-պարսկերեն՝ 38 ժամ 10 րոպե տևողությամբ:

*Արաբկիր վարչական շրջանի
քննչական բաժնի ավագ քննիչ՝*



Լ. Յուլյան

« 11 » 05. 2016թ.

ք. Երևան

ՀՀ Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ՝ Ա.Կարապետյանց, քննարկելով թիվ 09108716 քրեական գործի նյութերը

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2016թ. մարտի 22-ին ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնից ստացվել են «Սեդալգո» ՍՊԸ-ի աշխատակից՝ Ոսկի Սամվելի Օխիկյանի հաղորդման առթիվ նախապատրաստված նյութերն այն մասին, որ 10.03.2016թ. ոմն Էդիկը զանգահարել է «Սեդալգո» ՍՊԸ և ներկայանալով «Գազպրոմ» ընկերության պահեստապետ՝ պատվիրել է 56 տուփ 10 կիլոգրամանոց խմորիչ և 20 տուփ 5 կիլոգրամանոց բարելավիչ՝ ընդհանուր 1.193.200 ՀՀ դրամ արժողությամբ, ինչի գումարը խոստացել է փոխանցումով վճարել, սակայն մինչ օրս չի վճարել և խարդախությամբ տիրացել է ապրաքներին:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ ոմն Էդիկը «Գազեյ» մականիշի ավտոմեքենայով բեռնափոխադրումներ իրականացնող Երևան քաղաքի բնակիչ՝ Մկրտիչ Աստարյանի միջոցով Արտաշատ քաղաքում գտնվող «Սեդալգո» ՍՊԸ-ի պահեստից վերը նշված ապրանքները տեղափոխել է Երևան քաղաքի Թբիլիսյան նրբանցք 7/2 շենքի մոտ՝ Նույն օրը ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿԿ կալանավոր՝ ոմն Հակոբը զանգահարել է իր ծանոթ, Երևան քաղաքի բնակիչ՝ Հովհաննես Կոչկարյանին և վերջինս իր ծանոթ՝ Գարի Օհանջանովի և Գևորգ Մաթևոսյանի միջոցով 56 տուփ խմորիչն ու 20 տուփ բարելավիչը դատարկել են Թբիլիսյան նրբանցք 7/2 մոտ, որտեղից Կամո Գաբրիելյանի վարած «Երազ» մականիշի ավտոմեքենայով 56 տուփ խմորիչը տեղափոխել են Պ.Սևակի 1/5 հասցեում գտնվող «Սեմի ինտերթերեյդ» ՍՊԸ-ի պահեստ, որտեղ նշված ՍՊԸ փոխտնօրեն՝ Արտակ Սուքիասյանը Հ.Կոչկարյանին է վճարել 800 ԱՄՆ դոլլար գումար, որի մասին վերջինս հեռախոսով տեղյակ է պահել ոմն Հակոբին, իսկ 20 տուփ բարելավիչը Հ.Կոչկարյանն իր վարած «Օփել» մականիշի ավտոմեքենայով տեղափոխել է Նոր Նորքի 5-րդ զանգվածի Գալշոյան փողոցի 20 շենքի թիվ 10 հասցեում գտնվող իր բնակարան, որտեղից վերջինիս կինը՝ Հասմիկ Կատվայանը ոմն Հակոբի պահանջով դրանք հանձնել է Երևան քաղաքի բնակիչ՝ Ավետիք Հովհաննիսյանին, իսկ վերջինս էլ 20 տուփ բարելավիչը իրեն անծանոթ տղամարդու պահանջով տեղափոխել է Երևան քաղաքի Վարդաշեն թաղամաս, որտեղ դրանք հանձնել է իրեն անծանոթ մի տղամարդու:

Նյութերի նախապատրաստման ընթացքում Արտակ Սուքիասյանը ներկայացրել է 56 տուփ խմորիչները, որոնք ըստ վերջինիս հայտարարության գնել է ոմն Հակոբից:

«Սեդալգո» ՍՊԸ-ին ընդհանուր պատճառվել է խոշոր չափերի՝ ընդհանուր 1.193.200 ՀՀ դրամի գույքային վնաս:


Դեպքի առթիվ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնում 22.03.2016թ. ՀՀ քր. օր-ի 178-րդ հովածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 09108716 քրեական գործը կատարվում է նախաքննություն:

Նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել որպես վկա հարցաքննել Գաբրի Սերգեյի Օհանջանովին, ով չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, այլ տիրապետում է ռուսերեն գրավոր լեզվին, ուստի ելնելով վերագրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական ստավարտության օրենսգրքի 55-րդ և 3-րդ հոդվածներով:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Վարույթիս թիվ 09108716 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել <<Ֆինլոու>> ՍՊԸ տնօրեն, թարգմանիչ Վարդուհի Ավետիսի Շահինյանին /ՀՀ քաղաքացու անձնագիր AH 051285/ ում պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83 հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 33 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

**Քանաբեռ-Ձեյթուն վարչական շրջանի
քննչական բաժնի ավագ քննիչ՝**



Ա. Կարապետյան

Որոշման հետ ծանոթացա, իմ իրավունքները
և պարտականությունները ինձ պարզաբանված են
թարգմանիչ՝



Վ. Էսեհիջյան

« 11 » Մայիս 2016թ.


ՏԵՂԵԿԱՆՔ

ք.Երևան

06.10.2016թ.

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ, արդարադատության ապիտան Ա.Վ.Կարապետյանցս, կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ «ՖԻՆԼՈՈՒ» ՍՊ ընկերության տնօրեն և թարգմանիչ Վարդուհի Շահինյանը ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի վարույթում քննված թիվ 09108716 քրեական գործով վկա Գարրի Օհանջանովի 11.05.2016թ. տեղի ունեցած հարցաքննությանը ներգրավվել և մասնակցել է, որպես ռուսերեն լեզվի թարգմանիչ՝ 3 ժամ 50 րոպե տևողությամբ:
Տեղեկանք տրվում է «ՖԻՆԼՈՈՒ» ՍՊԸ-ին:

**Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի
քննչական բաժնի ավագ քննիչ,
արդարադատության կապիտան**



Ա. Վ. Կարապետյանց

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
/Թարգմանիչ ներգրավելու մասին/

« 12 » մայիսի 2016 թ.

քաղ. Արթիկ

«Վ» քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ արդարադատության մայր Ա. Ս. Իգիթյանս քննարկելով վարույթիս 23103815 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2015 թվականի նոյեմբերի 19-ին ժամը 16:30-ին «Մարալիկ առողջության կենտրոն» ՓԲԸ-ի շտաբօգնության կայանից ոստիկանության Անիի բաժին ահագանգ է ստացվել այն մասին, որ Շիրակի մարզի Գուսանագյուղ գյուղի բնակիչ, 15.03.1984 թվականին ծնված՝ Վոլոդյա Արարատի Հովհաննիսյանն ինքնասպանություն է գործել իրենց տանը նկուղի առաստաղից մեկուսիչ շերտով երկգալար մալուխով կախվելու միջոցով:

Ստուգմամբ պարզվել է, որ 2015 թվականի նոյեմբերի 19-ին ժամը 16:30-ի սահմաններում Շիրակի մարզի Գուսանագյուղ գյուղի 10-րդ փողոցի 1-ին տան բնակիչ, 15.03.1984 թվականին ծնված՝ Վոլոդյա Արարատի Հովհաննիսյանը նշված տան նկուղում առաստաղից մեկուսիչ շերտով երկգալար մալուխով կախվելու միջոցով ինքնասպան է եղել:

Դեպքի առթիվ 2015 թվականի նոյեմբերի 20-ին «Վ» քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 23103815 քրեական գործը, կատարվում է նախաքննություն:

Նկատի ունենալով, որ քրեական գործով անհրաժեշտ է Գյումրի քաղաքի բնակչուհի, ազգությամբ ռուս Վալենտինա Իվանովնա Գալոյանի հետ կատարել քննչական գործողություն, սակայն վերջինս ունի ռուսերեն կրթություն, չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, այլ տիրապետում է հայերեն բանավոր լեզվին ու ռուսերեն բանավոր և գրավոր լեզվին, իսկ դատավարության լեզուն հայերենն է, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վ» քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Սույն քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Ֆինլոու» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Ալեքսանդր Ստեփանի Գրիգորյանին, ծնված 1960թ. Գյումրի քաղաքում, հայ. «Վ» քաղաքացի, բնակվում է քաղաք Գյումրի Գորկու փողոցի 71-րդ շենքի 5-րդ բնակարանում, բարձրագույն կրթությամբ, տիրապետում է հայերեն, ռուսերեն գրավոր և բանավոր լեզուներին, կարողանում է կատարել թարգմանություններ գրավոր և բանավոր՝ հայերենից ռուսերեն և ռուսերենից հայերեն լեզուներով:

2. Ալեքսանդր Ստեփանի Գրիգորյանին բացատրել «Վ» քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ակնհայտ կեղծ թարգմանություն կատարելու համար «Վ» քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Ծանոթագրություն՝

Ավագ քննիչ՝

Ա. Ս. Իգիթյան

Ալեք. Գրիգորյան *Ա. Ս. Իգիթյան*

« 12 » մայիսի 2016 թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Բ

« 12 » մայիսի 2016թ.

Զաղ. Արթիկ

Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ, արդարադատության մայոր՝ Ա. Իգիթյանս կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ վարույթիս թիվ 23103815 քրեական գործով վալենտինա Իվանովնա Գալոյանին հարցաքննելու և վերջինիս հետ կապված այլ քննչական գործողություններ կատարելու նպատակով 2016 թվականի մայիսի 12-ին հրավիրվել է «FINLAW» ՍՊԸ-ի թարգմանիչ Ալեքսանդր Ստեփանի Գրիգորյանը, ով կատարել է վ. Գալոյանի հայերենից ռուսերեն ցուցմունքի, առերես հարցաքննության և այլ քննչական գործողությունների թարգմանություններ, որոնց ընդհանուր տևողությունը կազմել է 9 ժամ 20 րոպե:

Շիրակի մարզային քննչական վարչության
ավագ քննիչ, արդարադատության մայոր՝



Ա. Ա. ԻԳԻԹՅԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգման ճանաչելու մասին

«20» մայիսի 2016թ.

ք. Երևան

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Շ. Գրիգորյան, վերանայելով վարույթում գտնվող թիվ 13102816 քրեական գործի նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2015թ. դեկտեմբերի 31-ին ժամը 02.05-ին, թիվ 2-րդ բուժմիավորումից ոստիկանության Կենտրոնական բաժնի ահազանգ է ստացվել այն մասին, որ իրենց մոտ գանգի ծոծրակային շրջանի կոտրվածք, սալջարդ վերք, ստորին ծնոտի աջ վերել ճյուղի կոտրվածք ախտորոշմամբ բուժօգնության է դիմել Ռոբերտ Վահրամի Մելիքսեթյանը/ծնվ. 21.12.1988թ., բն. ք. Էջմիածին, Մաշտոցի փող. 1շ. 52 բն./, ով հայտարարել է, որ «Տաշիր» տոնավաճառի դիմաց անհայտ անձինք ծեծի են ենթարկել իրեն:

Դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության Կենտրոնականի բաժնում նախապատրաստված նյութերի հիման վրա ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 13102816 քրեական գործը և կատարվում է նախաքննություն:

Նկատի ունենալով, որ ՀՀ-ում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, իսկ վկա Քրիստինա Շիրազի Հարությունյանը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, ուստի նրա հետ քննչական գործողություններ կատարելու համար անհրաժեշտ է ներգրավել թարգմանիչ և որպես թարգմանիչ ճանաչել «Ֆինլոու» ՍՊԸ-ի ռուսերեն լեզվի թարգմանիչ Գագիկ Ավետիքի Շիրմազանյանին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 15 և 83 հոդվածներով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Վարույթում գտնվող թիվ 13102816 քրեական գործով թարգմանիչ ճանաչել «Ֆինլոու» ՍՊԸ-ի ռուսերեն լեզվի թարգմանիչ Գագիկ Ավետիքի Շիրմազանյանին:
2. Գագիկ Ավետիքի Շիրմազանյանին պարզաբանել ՀՀ քր. դատ. օր-ի 83 հոդվածով նախատեսված թարգմանի իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ՀՀ քր. օր-ի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ:

Շ.Գրիգորյան

Որոշմանը ծանոթացա, պարզաբանվել է ՀՀ քր. դատ. օր-ի 83 հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացվել են ակնհայտ սուտ թարգմանություն կատարելու համար ՀՀ քր. օր-ի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգմանիչ:

Գ.Շիրմազանյան



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՔՆՆՉԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆ ԵՎ ՆՈՐՔ-ՄԱՐԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ
ՔՆՆՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ

30.06.16թ.

ք. Երևան, Կրացյան 90

Տեղեկանք

Տրվում է տեղեկանքն այն մասին, որ «Ֆինլուու» ՍՊԸ-ի ռուսերեն լեզվի թարգմանիչ գազիկ Շիրմազանյանը ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում քննվող թիվ 13102816 քրեական գործով կատարել է 4 ժամ 15 րոպե բանավոր թարգմանություն :

Ավագ քննիչ՝

Շ.Մ.Գրիգորյան

Կոնքրետ
16.11.14

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Քրեական գործով թարգման հրավիրելու մասին

<<25>> մայիսի 2016թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության հատկապես կարևոր գործերով քննիչ Վ. Տ. Սահակյանս, ուսումնասիրելով թիվ 69108015 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Անհայտ անձը, 2015 թվականի հունիսին, համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ, ապօրինի մուտք գործելով <<Կրեատիվե>> ՄՊ ընկերության տնօրեն Կարեն Նահապետյանի և վերջինիս գործընկեր հանդիսանող իսպանական <<BEBE DUE>> ընկերության ներկայացուցչի միջև էլեկտրոնային փոստի միջոցով վարվող գործնական նամակագրությունների մեջ, <<Կրեատիվե>> ՄՊԸ-ի կողմից <<BEBE DUE>> ընկերությանը վճարվելիք գումարները հափշտակելու դիտավորությամբ, ստեղծել է տվյալ ընկերության էլեկտրոնային հասցեի նմանակը, որից հետո հանդես գալով նշված կազմակերպության անվամբ, տվյալ էլեկտրոնային հասցեի միջոցով ուղարկվող նամակագրություններում նշելով իր կողմից տնօրինվող բանկային հաշվի տվյալները, Կ. Նահապետյանի վստահությունը չարաշահելու եղանակով, խարդախությամբ խոշոր չափի գումարներ հափշտակելու նպատակով վերջինիս առաջարկել է կատարել 4350 Եվրո վճարումը իր կողմից տնօրինվող բանկային հաշվին: Այնուհետև <<Կրեատիվե>> ՄՊ ընկերության կողմից 2015 թվականի հունիսի 23-ին տվյալ անձի բանկային հաշվին է փոխանցվել վճարման ենթակա խոշոր չափի՝ 2.311.329 ՀՀ դրամի համարժեք 4350 Եվրոն, որը տվյալ անձի կողմից համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հափշտակվել է:

Բացի այդ, անհայտ անձը, 2015 թվականի հունիսին, համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ, ապօրինի մուտք գործելով <<Սի Էս Էլ պրոջեկտ>> ընկերության տնօրեն Կարեն Նահապետյանի և վերջինիս գործընկեր հանդիսանող բելգիական <<PVC>> ընկերության ներկայացուցչի միջև էլեկտրոնային փոստի միջոցով վարվող գործնական նամակագրությունների մեջ, <<Սի Էս Էլ պրոջեկտ>> ՄՊԸ-ի կողմից <<PVC>> ընկերությանը վճարվելիք գումարները հափշտակելու դիտավորությամբ, ստեղծել է տվյալ ընկերության էլեկտրոնային հասցեի նմանակը, որից հետո հանդես գալով նշված կազմակերպության անվամբ, տվյալ էլեկտրոնային հասցեների միջոցով ուղարկվող նամակագրություններում նշելով իր կողմից տնօրինվող բանկային հաշվի տվյալները, Կ. Նահապետյանի վստահությունը չարաշահելու եղանակով, խարդախությամբ առանձնապես խոշոր չափի գումար հափշտակելու նպատակով վերջինիս առաջարկել է կատարել 15.066 Եվրո վճարումը այդ բանկային հաշվին: Այնուհետև <<Սի Էս Էլ պրոջեկտ>> ՄՊ ընկերության կողմից 2015 թվականի հունիսի 26-ին տվյալ անձի բանկային հաշվին է փոխանցվել վճարման ենթակա առանձնապես խոշոր չափի՝ 7.978.652 ՀՀ դրամի համարժեք 15.066 Եվրոն, որը տվյալ անձի կողմից համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հափշտակվել է:

Այնուհետև, անհայտ անձը, 2015 թվականի հուլիսին, համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ, ապօրինի մուտք գործելով <<Կրեատիվե>> ՄՊ

ընկերության տնօրեն Կարեն Նահապետյանի և վերջինիս գործընկեր հանդիսանող հապանական <<BEBE DUE>> ընկերության ներկայացուցչի միջև էլեկտրոնային փոստի միջոցով վարվող գործնական նամակագրությունների մեջ, <<Կրեատիվե>> ՄՊԸ-ի կողմից <<BEBE DUE>> ընկերությանը վճարվելիք գումարները հափշտակելու դիտավորությամբ, ստեղծել է տվյալ ընկերության էլեկտրոնային հասցեի նմանակը, որից հետո հանդես գալով նշված կազմակերպության անվամբ, տվյալ էլեկտրոնային հասցեի միջոցով ուղարկվող նամակագրություններում նշելով իր կողմից տնօրինվող բանկային հաշվի տվյալները, Կ. Նահապետյանի վստահությունը չարաշահելու եղանակով, խարդախությամբ խոշոր չափի գումարներ հափշտակելու նպատակով վերջինիս առաջարկել է կատարել խոշոր չափի 1.396.152 ՀՀ դրամի համարժեք 2650 Եվրո վճարումը իր կողմից տնօրինվող բանկային հաշվին: Սակայն Կ. Նահապետյանը հասկանալով, որ իրեն խաբում են, գումարը չի փոխանցել և անհայտ անձն իր կամքից անկախ հանգամանքներում չի կարողացել հանցագործությունն ավարտին հասցնել:


Դեպքի առթիվ 2015 թվականի օգոստոսի 21-ին ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 3-րդ մասի 1-ին կետով և 34-181-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 69108015 քրեական գործը:

Նկատի ունենալով, որ անհրաժեշտություն է առաջացել քրեական գործով Լեհաստանի Հանրապետության իրավասու մարմիններին հասցեագրված իրավական օգնություն ցուցաբարելու մասին հարցումը և կից փաստաթղթերը հայերենից թարգմանել լեհերեն, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով.


Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 69108015 քրեական գործով որպես թարգման ներգրավել <<Ֆին Լոու>> ՄՊ ընկերության թարգմանիչ Արամ Հախինյանին:
2. Զ. Ավետիսյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

**ՀԿԳ քննիչ,
արդարադատության կապիտան՝**


Վ. Տ. Սահակյան

Ծանոթացա թարգմանի իրավունքներին և պարտականություններին, նախազգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Ա. Հախինյան 

<<25>> մայիսի 2016թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Թիվ 69108015 քրեական գործով

Ես՝ ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության հարկապես կարևոր գործերով քննիչ Վ.Տ. Սահակյանս, վարույթումս քննված թիվ 69108015 քրեական գործով կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ թարգմանիչ Արամ Հախինյանը, ով հանդիսանում է «ՖԻՆԼՈՈՒ» ՍՊԸ-ի աշխատակից, թիվ 69108015 քրեական գործով որպես թարգմանիչ է ներգրավվել 25.05.2016 թվականին և կատարել է առաջին նյութի գրավոր թարգմանություն լեհերենից հայերեն՝ 83073 նիշ, իսկ 29.06.2016թ. կատարել է երկրորդ նյութի գրավոր թարգմանություն լեհերենից հայերեն՝ 89045 նիշ:

ՀԿԳ քննիչ,
արդարադատության կապիտան՝

Վ. Ս. Սահակյան


Վ.Տ. Սահակյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

թարգմանիչ ներգրավելու մասին

« 27 » մայիսի 2016թ.

ք. Երևան

ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչության ավագ քննիչ Հ. Պետրոսյանս, վերանայելով վարույթիս թիվ 60106416 քրեական գործի նյութերը

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2016 թվականի մայիսի 7-ին՝ ժամը 05:50-ին, ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության ՃՊԾ 1-ին սպայական գումարտակի 6-րդ սպայական դասակի ավագ տեսուչ Ռաֆայել Սարգսյանի կողմից Երևան քաղաքի Պոռոշյան փողոցում ոչ սթափ վիճակում տրանսպորտային միջոց վարելու համար Երևան քաղաքի բնակիչ Միխայիլ Արկադիի Հարությունյանի/ծնվ. 02.08.1980թ. բն. ք. Երևան, Աղբյուր Սերոբի փող. 522. 4բն./ նկատմամբ կազմվել է վարչական իրավախախտումների վերաբերյալ թիվ ԱԹ 760334 արձանագրությունը, որը ճՌ համակարգչային բազա մուտքագրելիս պարզվել է, որ 17.12.2015թ. Մ. Հարությունյանի նկատմամբ մեկ տարվա ընթացքում ոչ սթափ վիճակում կրկնակի անգամ տրանսպորտային միջոց վարելու համար կազմվել է թիվ ԱԹ 532827 արձանագրությունը, որի հիման վրա 08.01.2016թ. Մ. Հարությունյանի նկատմամբ կայացվել է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից մեկ տարի ժամանակով զրկելու մասին որոշում:

Դեպքի առթիվ Երևան քաղաքի քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 243.1 հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ 60106416 քրեական գործը, կատարվում է նախաքննություն:

Նկատի ունենալով, որ Միխայիլ Հարությունյանը չի տիրապետում ՀՀ քրեական դատավարության գրավոր լեզվին, սակայն տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին, ուստի անհրաժեշտ է հնարավորություն ընձեռել նրան թարգմանի օգնությամբ իրականացնել քրեադատավարական օրենքով սահմանված իր իրավունքները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 15-րդ և 83-րդ հոդվածներով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Սույն քր. գործի նյութերով որպես թարգման հրավիրել «Ֆին Լոու» ՍՊԸ-ի աշխատակից՝ Անուշ Սուրենի Խանիկյանին /ծնվ. 04.10.1973թ. հաշվառված ք. Երևան, 16 թաղ. 142. 29բն./, որն ազատորեն տիրապետում է ռուսերեն գրավոր ու բանավոր լեզուներին, կարող է կատարել թարգմանություն հայերենից ռուսերեն և հակառակը, գործով չչահագրգռված անձ է:
2. Թարգման Անուշ Խանիկյանին պարզաբանել իր պարտականությունները և իրավունքները ու նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված

պատասխանատվության վերաբերյալ, որի մասին նրանց հայտնել ստորագրությամբ:

Ավագ քննիչ



Լ. Պետրոսյան

Սույն որոշումը ինձ հայտնվել է, նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Միաժամանակ ինձ պարզաբանել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված՝ թարգմանչի պարտականություններն ու իրավունքները:

Թարգմանիչ՝



Ա. Խանիկյան


ՏԵՂԵԿԱՆՔ

06.06.2016թ.

ք. Երևան

Տրվում է «Ֆին Լոու» ՍՊԸ-ի աշխատակից Անուշ Սուրենի Խանիկյանին, առ այն, որ նա ՀՀ ՔԿ Երևան քաղաքի քննչական վարչությունում քննվող թիվ 60106416 քրեական գործով մասնակցել է որպես ուսերեն լեզվի թարգմանիչ և կատարել 6 ժամ բանավոր և 86572 նիշ գրավոր թարգմանություն:

ԱՎԱԳ ՔՆՆԻՉ



Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ
Թարգմանիչ հրավիրելու մասին

27 մայիսի 2016թ.

ք.Գյումրի

«Քննչական կոմիտեի ՋԲԳՎ տասներորդ կայազորային քննչական բաժնի քննիչ Ս.Ս.Մարտիրոսյան, վերանայելով վարույթում քննվող թիվ 90359416 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

Ռ-Դ ՊՆ 04436 զորամասի պայմանագրային զինծառայող, եֆրեյտոր Սերգեյ Ալեքսանդրի Խորոշիլը, 2016թ. մայիսի 5-ին ժամը 05:00-ից 06:00-ն ընկած ժամանակահատվածում, Գյումրի քաղաքի 'Ջրահարս' ռեստորան-հյուրանոցային համալիրում, «ՊՆ 69334 զորամասի շտաբի պետի տեղակալ Վարդան Գառնիկի Դալլաքյանի վերնազգեստի աջ արտաքին գրպանից հափշտակություն կատարելու դիտավորությամբ, գաղտնի վերցրել է վերջինիս պատկանող 'ՎՏԲ' բանկի էլեկտրոն քարտը և թղթի վրա գրված ծածկագիրը, այնուհետև ուրիշի գույքի խոշոր չափերի գողություն կատարելու շուրջ նախնական համաձայնության գալով Ռ-Դ ՊՆ 04436 զորամասի պայմանագրային զինծառայողներ, սերժանտ Անատոլի Անդրեյի Խարսևի և եֆրեյտոր Սերգեյ Սերգեյի Արսենցևի հետ՝ փորձել են նույն օրը, ժամը 06:00-ից 09:00-ն ընկած ժամանակահատվածում, Գյումրի քաղաքի Պ.Սևակ 1, Գորկու 78 և Շրջողակ 2 հասցեներում գտնվող բանկոմատներից կանխիկացնել այդ պահի դրությամբ քարտի հաշվեհամարին եղած 1.227.000 «ձրամը, սակայն հանցագործությունը չեն կարողացել ավարտին հասցնել իրենց կամքից անկախ հանգամանքներում, քանի որ քարտի գործող օրվա տրված կանխիկացման սահմանաչափի պատճառով, կարողացել են կանխիկացնել ընդհանուր 550.000 «ձրամ գումար:

Դեպքի առթիվ 14.05.2016թ. տասներորդ կայազորային քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ «Քր. օր-ի 34-177-րդ 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի հատկանիշներով: Նկատի ունենալով, որ քրեական գործով անհրաժեշտ է կատարել ռուսերենից հայերեն թարգմանություն, իսկ քրեական դատավարության լեզուն հայերենն է, ուստի անհրաժեշտ է հրավիրել թարգմանիչ՝ ռուսերենից հայերեն թարգմանություն կատարելու նպատակով: Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Քր. դատ. օր-ի 15-րդ և 83-րդ հոդվածներով

ՈՐՈՇԵՑԻ

1. Սույն քրեական գործով ռուսերենից հայերեն թարգմանություն կատարելու համար որպես թարգմանիչ հրավիրել 'Ֆինլուու' ՍՊԸ թարգմանիչ՝ Ալեքսանդր Ստեփանի Գրիգորյանին, որն ազատ տիրապետում է նշված լեզուներին:
2. Որոշման մասին հայտնել Ա.Ս.Գրիգորյանին և նրան բացատրել «Քր. դատ. օր-ի 83-րդ հոդ. նախատեսված թարգմանիչի իրավունքները և պարտականությունները:

ՏԱՍՆԵՐՈՐԴ ԿԱՅԱԶՈՐԱՅԻՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՔՆՆԻՉ՝



Ս.Ս.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Որոշումն ինձ հայտնված է « 17 » 2016թ.


բացատրված են ՀՀ քր. դատ. օր-ի 83-րդ հոդ. նախատեսված իրավունքներս ու պարտականություններս, միաժամանակ նախազգուշացված եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քր. օր-ի 338-րդ հոդ. նախատեսված քր. պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝



Ա.Գրիգորյան

ՏԱՍՆԵՐՈՐԴ ԿԱՅԱԶՈՐԱՅԻՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՔՆՆԻՉ՝



Ա.Ա.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ամփոփիչ տեղեկանք

07.09.2016թ.

Զ. Գյումրի

«Ճ քննչական կոմիտեի ՁԲԳՎ տասներորդ կայազորային քննչական բաժնում քննվող թիվ 90359416 քրեական գործով որպես թարգմանիչ է ներգրավվել 'Ֆինլուու' ՍՊԸ թարգմանիչ Ալեքսանդր Ստեփանի Գրիգորյանը, ով քրեական գործով 2016թ. մայիս-սեպտեմբեր ամիսներին մասնակցել է քննչական գործողությունների՝ ընդհանուր 44 ժամ տևողությամբ:

«Ճ ԲԿ ՁԲԳՎ 10-րդ ԿԲԲ քննիչ՝  Մ.Մ.Մարտիրոսյան

« 23 » հունիսի 2016թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Դ.Ռ.Կիրակոսյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 58203216 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

Մարգարիտա Արզարի Մանուկյանը և Անահիտ Կառլենի Խաչատրյանն իրենց զավակների հարսանեկան արարողությանը Եգիպտոսում կազմակերպելու համար 2015թ. սեպտեմբերի 17-ին Երևանի Պարոնյան 6 հասցեում գործող «Համար մեկ տուրիստական գործակալություն» ՍՊԸ-ում՝ վերջինիս գործադիր տնօրեն Լուսինե Հովիկի Ջանինյանի հետ կնքել են արտագնա տուրիստական ծառայություններ մատուցելու մասին 21 ամսի համար պայմանագիր՝ ընդհանուր 15.000 ԱՄՆ դոլար արժողությամբ: Պայմանագրի համաձայն Լ.Ջանինյանին փոխանցվել է կանխավճար 3.382.000 ՀՀ դրամի չափով, որից 864.000 ՀՀ դրամը Լ.Ջանինյանը պահանջել է փոխանցել իրեն առձեռն՝ պատճառաբանելով, որ դրան պետք է ավելացնի 600 ԱՄՆ դոլար և նոր միայն կատարի բանկային փոխանցում: 2015թ. հոկտեմբերի 30-ին տեղի ունեցած ավիաթարից հետո 2015թ. նոյեմբերի 01-ին Մ.Մանուկյանը հրաժարվել է ամբողջ փաթեթից և հետ պահանջել վճարած գումարը: Ի պատասխան ներկայացված պահանջի՝ Լ.Ջանինյանը տվել է 5.274 ԱՄՆ դոլարի վճարման կեղծ հանձնարարագիր, որում ձեռագիր ավելացված է եղել 1.860 ԱՄՆ դոլարի վերաբերյալ նշում, իսկ գումարը չի վերադարձրել՝ պատճառաբանելով, որ այն փոխանցվել է վրացական «Տուրի Ջի» ՍՊԸ-ին: Սակայն, 2015թ. դեկտեմբերի 30-ին Թբիլիսի մեկնած Մ.Մանուկյանի բարեկամներն այցելել են նշված ընկերություն, որտեղից էլ ստացել են գրավոր պարզաբանում առ այն, որ Մ.Մանուկյանի և նրա հետ մեկնող անձանց անուններով ոչ մի տոմսի կամ հյուրանոցի ամրագրում չի պատվիրվել:

Բացի այդ, Լ.Ջանինյանը 2015թ. դեկտեմբերի սկզբին Կարեն Հովհաննեսի Չոբանյանի, նրա կնոջ և երկու զավակների հանգիստը հունվարի 2-9 ԱՄԷ-ի Դուբայ քաղաքի «Շարժահ Գրանդ» հյուրանոցում կազմակերպելու պատրվակով՝ վերջինից պահանջել և առձեռն ստացել է 2.563 ԱՄՆ դոլարին համարժեք 1.248.000 ՀՀ դրամ, որի դիմաց տվել է ավիատոմսերը, մուտքի արտոնագրերը, հյուրանոցի վաուչերը: 2015թ. դեկտեմբերի 31-ին երբ Կ.Չոբանյանը ընտանիքով գտնվել է Թբիլիսիում, որպեսզի այնտեղից մեկնեն Դուբայ, Լ.Ջանինյանը զանգահարել և հայտնել է, որ մուտքի արտոնագրերի հետ առաջացել են խնդիրներ և խորհուրդ է տվել չմեկնել՝ խոստանալով վերադարձնել վճարած գումարը տոնական օրերից հետո: ՀՀ վերադառնալուց հետո Կ.Չոբանյանը պարզել է, որ իրենց անվամբ ոչ մի ամրագրում հյուրանոցում չի կատարվել, իսկ մուտքի արտոնագրերը և Լ.Ջանինյանի կողմից էլեկտրոնային փոստով ուղարկած 2.500 ԱՄՆ դոլարի վճարման հանձնարարականը, որով «Համար մեկ տուրիստական գործակալություն» ՍՊԸ ընկերությունն իր վերադարձում էր վճարված գումարը՝ կեղծ են:

Դեպքի առթիվ 02.03.2016թ. ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով հարուցվել է թիվ 58203216 քրեական գործը, որը տարածքային ենթակայության կարգով ուղարկվել է Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի՝ հետագա նախաքննությունը շարունակելու համար:

2016թ. մարտի 11-ին թիվ 58203216 քրեական գործի նախաքննության կատարումը հանձնարարվել է ինձ:

Վրաստանի Հանրապետությունում գործող «Թուրի Ջի» ՍՊԸ ընկերության ռեզիոնայ մենեջեր Դավիթ Ջիվանի Ալավերդյանը ՀՀ ոստիկանության Կենտրոնական բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ «Համար մեկ տուրիստական գործակալություն» ՍՊԸ ընկերության տնօրեն Լուսինե Հովիկի Ջանինյանը 2015թ. դեկտեմբերի 30-ին «Թուրի Ջի» ՍՊԸ ընկերությանն է ուղարկել 4.660 ԱՄՆ դոլար գումարի վճարման կեղծ հանձնարական.

որի դիմաց վերջինիս ընկերությանը մատուցվել է հիշյալ գումարի չափով ծառայություն, որի գումարը Լ.Ջանինյանը խարդախությամբ հափշտակել է:

Գ.Ալավերդյանի կողմից տրված հաղորդումն ուղարկվել է Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին՝ հետագա ընթացքը որոշելու համար:

2016թ. մայիսի 21-ին «Թուրի Ջի» ՍՊ ընկերությունը ճանաչվել է տուժող:

Նախաքննության ընթացքում Գ.Ալավերդյանը վարույթն իրականացնող մարմնին է ներկայացրել «Թուրի Ջի» ընկերության վրացերեն լեզվով ռեեստրից կատարված քաղվածքներ:

Նկատի ունենալով, որ թիվ 58203216 քրեական գործով անհրաժեշտ է վրացերեն լեզվից հայերեն թարգմանել հիշյալ փաստաթղթերը և դրա համար անհրաժեշտ է թարգմանչի մասնակցությունը, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 15-րդ և 83-րդ հոդվածներով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Որպես թարգման հրավիրել «Ֆինլոու» ՍՊԸ-ի թարգմանիչ Էդիտա Մուրադյանին /անձ. AM0622038/, ով ազատորեն տիրապետում է հայերեն գրավոր ու բանավոր լեզվին, կարող է կատարել թարգմանություն վրացերենից հայերեն և հակառակը. գործով չչահագրգռված անձ է:
2. Թարգման Էդիտա Մուրադյանին պարզաբանել իր իրավունքներն ու պարտականությունները և նախազուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության վերաբերյալ, որի մասին նրան հայտնել ստորագրությամբ:

Ավագ քննիչ՝

Գ.Ն. Կիրակոսյան

Սույն որոշումը ինձ հայտնվել է, նախազուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին: Միաժամանակ ինձ պարզաբանել եմ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանի պարտականություններն ու իրավունքները:

Թարգման՝ Էդիտա Մուրադյան.

ՏԵՂԵԿԱՆՔ

Ես՝ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Դ.Ռ. Կիրակոսյանս, վարույթումս քննված թիվ 58203216 քրեական գործով կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ թարգմանիչ Էդիտա Սամվելի Մուրադյանը, ով հանդիսանում է «ՏԻՆԼՈՌԻ» ՍՊԸ-ի աշխատակից, թիվ 58203216 քրեական գործով որպես թարգմանիչ է ներգրավվել 23.06.2016 թվականին և կատարել է գրավոր թարգմանություն վրացերենից հայերեն՝ 3756 նիշ:

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների
քննչական բաժնի ավագ քննիչ

 Դ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ